Թողարկման 19-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2012

Մայիս

թիվ 5 (165)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, «Դրամատուն» ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրելու, «Ֆաստ-Կրեդիտ» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման և «Արսագ» ՓԲԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառք իրականացնելու լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ին «Բլիզկո» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու, «Մոբիդրամ» ՓԲԸ դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպության մի շարք մասնաճյուղեր հաշվառելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 ՍՊԸ-ի, 1 ՓԲԸ-ի նկատմամբ տուգանք կիրառելու և 1 արտարժույթի փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 118-Ն որոշումը «Հիսուն դրամ անվանական արժեքով՝ Հայաստանի Հանրապետության մարզերին և Երևանին նվիրված 2012 թվականի նմուշի Հայաստանի Հանրապետության շրջանառու հիշատակային մետաղադրամները շրջանառության մեջ դնելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 119-Ն որոշումը «2012-2013 թվականների հուշադրամների ծրագրով նախատեսված «Սերգեյ Փարաջանով» հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին»

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 120-Ն որոշումը «Հինգ հազար, տասը հազար և քսան հազար դրամ անվանական արժեքներով 2012 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին»

14 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 2 պաշտոնական պարզաբանումը «Հրապարակային եղանակով դրամական միջոցների ներգրավման մասին»

16 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 3 պաշտոնական պարզաբանումը ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետի մասին»

19 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8% (որոշում թիվ 116Ա):
- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «Դրամատուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 136Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Ֆաստ-Կրեդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման և «Արսագ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 137Ա, 139Ա):
- ***«Բլիզկո» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «ԲՏԱ բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 138Ա):
- ***Հաշվառվել են*** «Մոբիդրամ» փակ բաժնետիրական ընկերության դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպության «Սասունցի Դավիթ» և «Տիգրան Մեծ» մասնաճյուղերը (որոշում թիվ 141Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 սահմանափակ պատասխանատվությամբ, 1 փակ բաժնետիրական ընկերությունների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 1610000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/443Ա, 1/444Ա) և 1 արտարժույթի փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/545Ա):

*Հիսուն դրամ անվանական արժեքով՝ Հայաստանի Հանրապետության մարզերին և Երևանին նվիրված 2012 թվականի նմուշի Հայաստանի Հանրապետության շրջանառու հիշատակային մետաղադրամները շրջանառության մեջ դնելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը, 41-րդ, 42-րդ, 47-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2012 թվականի հունիսի 25-ից շրջանառության մեջ դնել հիսուն դրամ անվանական արժեքով Հայաստանի Հանրապետության մարզերին և Երևանին նվիրված (Արարատի մարզ, Արմավիրի մարզ, Արագածոտնի մարզ, Լոռու մարզ, Գեղարքունիքի մարզ, Շիրակի մարզ, Տավուշի մարզ, Կոտայքի մարզ, Սյունիքի մարզ, Վայոց ձորի մարզ, Երևան) 2012 թվականի նմուշի Հայաստանի Հանրապետության շրջանառու հիշատակային մետաղադրամները:
2. Սահմանել, որ հիսուն դրամ անվանական արժեքով Հայաստանի Հանրապետության մարզերին և Երևանին նվիրված 2012 թվականի նմուշի Հայաստանի Հանրապետության շրջանառու հիշատակային մետաղադրամները Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարամիջոց են և ենթակա են անվերապահ ընդունման իրենց անվանական արժեքներով՝ փողով արտահայտված բոլոր պարտավորությունների դիմաց: Հիսուն դրամ անվանական արժեքով 2003 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության մետաղադրամները մնում են շրջանառության մեջ առանց սահմանափակումների և շրջանառության պայմանների փոփոխության:
3. Հաստատել հիսուն դրամ անվանական արժեքով՝ Հայաստանի Հանրապետության մարզերին և Երևանին նվիրված 2012 թվականի նմուշի Հայաստանի Հանրապետության շրջանառու հիշատակային մետաղադրամների նկարագրությունը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 մայիսի 2012 թ., N118-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մայիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.05.2012 թ. (ՀՀԳՏ N15 (428), 1.06.2012):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մայիսի 15-ի թիվ 118-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

50 դրամ անվանական արժեքով շրջանառու հիշատակային մետաղադրամների

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է 11 տեսակի 50 դրամ անվանական արժեքով շրջանառու հիշատակային մետաղադրամներ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության տասը մարզերին և Երևանին:

Հուշադրամների դիմերեսի կենտրոնում պատկերված են.

1. Տավուշի բերդը (Տավուշի մարզին նվիրված շրջանառու հիշատակային մետաղադրամ)
2. Գառնու հեթանոսական տաճարը (Կոտայքի մարզին նվիրված շրջանառու հիշատակային մետաղադրամ)
3. Սևանի թերակղզին (Գեղարքունիքի մարզին նվիրված շրջանառու հիշատակային մետաղադրամ)
4. Հաղպատի եկեղեցական համալիրը (Լոռու մարզին նվիրված շրջանառու հիշատակային մետաղադրամ)
5. Ֆայտոն (Շիրակի մարզին նվիրված շրջանառու հիշատակային մետաղադրամ)
6. Սյունիքի դարպասները (Սյունիքի մարզին նվիրված շրջանառու հիշատակային մետաղադրամ)
7. Խոր Վիրապը Արարատի պատկերի ներքո (Արարատի մարզին նվիրված շրջանառու հիշատակային մետաղադրամ)
8. Քարայծ (Վայոց ձորի մարզին նվիրված շրջանառու հիշատակային մետաղադրամ)
9. Բյուրականի աստղադիտարանը (Արագածոտնի մարզին նվիրված շրջանառու հիշատակային մետաղադրամ)
10. Սարդարապատը (Արմավիրի մարզին նվիրված շրջանառու հիշատակային մետաղադրամ)
11. Սասունցի Դավթի արձանը երկաթգծի կայարանի շենքի պատկերի ներքո (Երևանին նվիրված շրջանառու հիշատակային մետաղադրամ)

Պատկերների ներքևում մետաղադրամների թողարկման տարեթիվն է՝ «2012», իսկ շրջագծով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» և համապատասխանաբար՝ «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ», «ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ», «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ», «ԼՈՌՈՒ ՄԱՐԶ», «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ», «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ», «ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ», «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ», «ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ», «ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ» և «ԵՐԵՎԱՆ» մակագրությունները:

Հուշադրամի դարձերեսի կենտրոնում շրջանառու հիշատակային մետաղադրամի անվանական արժեքն է՝ «50 դրամ», իսկ շրջագծով՝ զարդանախշեր:

Դիմերեսի էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Դարձերեսի էսքիզի հեղինակն է Կարապետ Աբրահամյանը:

Շրջանառու հիշատակային մետաղադրամները հատվել են Ֆինլանդիայի դրամահատարանում:

Շրջանառու հիշատակային մետաղադրամների բնութագիրը

Անվանական արժեքը	50 դրամ
Մետաղը	արույրապատ պողպատ
Քաշը	3,50 գ
Տրամագիծը	21,5 մմ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	60 000 հատ յուրաքանչյուր տեսակից

50 դրամ անվանական արժեքով շրջանառու հիշատակային մետաղադրամների դիմերեսի և դարձերեսի էսքիզները

Դիմերեսի էսքիզներ

1. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ



2. ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ



3. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



4. ԼՈՌՈՒ ՄԱՐԶ



5. ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ



6. ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



7. ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ



8. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ



9. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ



10. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ



11. ԵՐԵՎԱՆ



Դարձերեսի էսքիզ



*2012-2013 թվականների հուշադրամների ծրագրով նախատեսված «Սերգեյ Փարաջանով» հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2012 թվականի հունիսի 12-ից շրջանառության մեջ դնել «Սերգեյ Փարաջանով» արծաթե հուշադրամը:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամի նկարագրությունը, որը հուշադրամի էսքիզների հետ մեկտեղ ներկայացված է սույն որոշման Հավելվածում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 մայիսի 2012 թ., N119-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մայիսի 15-ի թիվ 119-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. «Սերգեյ Փարաջանով» հուշադրամի

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Սերգեյ Փարաջանովին նվիրված արծաթե հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսի աջ մասում պատկերված է Սերգեյ Փարաջանովի կոլաժից հատված, ձախ մասում Փարաջանովի լուսանկարն է: Կենտրոնում կինոխցիկ է ամրակալանի վրա, որից աջ ճեղքված նուռ է, իսկ ձախ՝ դրամահատարանի ֆիրմային նշանը: Ներքևի մասում հուշադրամի անվանական արժեքն է՝ «DRAM 100 ԴՐԱՄ» և Հայաստանի Հանրապետության զինանշանը: Ձախ և ներքևի շրջագծերով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2012»:

Հուշադրամի դարձերեսի կենտրոնում Փարաջանովի լուսանկարն է, որից վերև «SERGEI PARAJANOV» ոճավորված մակագրությունն է: Վերևի աջ անկյունում Փարաջանովի «Ֆաբերժեի հիշատակին» կոլաժից հատված է, իսկ դրանից ներքև՝ նրա ինքնատիպ ստորագրությունը, որն ավարտվում է անսովոր կափարիչով. ռեժիսորը դրա վրա քերծելով գծել է Պուշկինի դիմանկարը: Ձախ կողմում ուղղահայաց ծննդյան և մահվան տարեթվերն են՝ «1924 – 1990»:

Հուշադրամի էսքիզների հեղինակն է Ուրսուլա Վալեժակը:
Հուշադրամը հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

---


* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մայիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.05.2012 թ. (ՀՀՊՏ N15 (428), 1.06.2012):

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	28.28 գ
Չափը	28.0 x 40.0 մմ
Դրամաշուրթը	հարթ
Որակը	լավացված
Տպաքանակը	մինչև 6000 հատ

1.1. «Սերգեյ Փարաջանով» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հինգ հազար, տասը հազար և քսան հազար դրամ անվանական արժեքներով 2012 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին*

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը, 41-րդ, 42-րդ, 47-րդ հոդվածները և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2012 թվականի հունիսի 25-ից շրջանառության մեջ դնել հինգ հազար, տասը հազար և քսան հազար դրամ անվանական արժեքներով 2012 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները:

2. Սահմանել, որ հինգ հազար, տասը հազար և քսան հազար դրամ անվանական արժեքներով 2012 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները Հայաստանի Հանրապետության

* *Ոչ պաշտոնական հրատարակությունից:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մայիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.05.2012 թ. (ՀՀՊՏ N15 (428), 1.06.2012):

տարածքում օրինական վճարամիջոց են և ենթակա են անվերապահ ընդունման իրենց անվանական արժեքով փողով արտահայտված բոլոր պարտավորությունների դիմաց՝ առանց ժամկետային սահմանափակումների: Հինգ հազար դրամ անվանական արժեքով 1999, 2003 և 2009, տասը հազար դրամ անվանական արժեքով 2003, 2006 և 2008, քսան հազար դրամ անվանական արժեքով 1999, 2007 և 2009 թվականների թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները մնում են շրջանառության մեջ առանց սահմանափակումների և շրջանառության պայմանների փոփոխության:

3. Հաստատել հինգ հազար, տասը հազար և քսան հազար դրամ անվանական արժեքներով 2012 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամների նկարագրությունները, որոնք թղթադրամների նմուշների հետ ներկայացված են սույն որոշման հավելվածում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 մայիսի 2012 թ., N120-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մայիսի 15-ի թիվ 120-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հինգ հազար դրամ անվանական արժեքով 2012 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի

Թղթադրամը տպագրված է սպիտակ գույնի թղթի վրա: Թղթադրամի չափսերն են՝ 143 x 72 մմ: Թղթադրամին Հովհաննես Թումանյանի դիմանկարը պատկերող և անվանական արժեքն արտահայտող ջրանիշ է: Դիմերեսի և դարձերեսի հիմնական գույներն են կանաչը և դարչնագույնը: Թղթադրամը պարունակում է երկու պաշտպանական ներգիծ, որոնցից մեկն ամբողջությամբ ներդրված է թղթի մեջ և երևում է միայն լուսընդդեմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, իսկ մյուսը թղթադրամի դարձերեսի վրա երևում է արծաթափայլ պատուհանների (կետագծերի), իսկ լուսընդդեմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, որի մեջ կարդացվում է «AMD 5000» մանրատառաշարը:

<u>Դիմերես</u>

Թղթադրամի ձախ մասում բաց դարչնագույն ֆոնի վրա մոխրագույնով պատկերված է հայ մեծ գրող, հասարակական-քաղաքական գործիչ Հովհաննես Թումանյանի դիմանկարը: Դիմանկարից ձախ սև գույնով ուղղահայաց գրված է «Հովհաննես Թումանյան 1869 -1923», իսկ դրանից ձախ փակցված է ուղղահայաց կինեգրամայով ժապավենաձև փայլաթիթեղ: Փայլաթիթեղի երկայնքով, պարբերաբար կրկնվելով, երևում են Հովհաննես Թումանյանի կիսադեմը աջից ու դրամի խորհրդանշանը՝ «Դ», և մի զարդանախշ ու «5000» գրառումը, որոնք դիտման անկյան չնչին փոփոխման ընթացքում նույն տեղում փոխարինում են միմյանց: Այս պատկերների միջև երևում է «5000» գրառումը, որը լույսի անկման անկյան փոփոխության դեպքում մեծանում և փոքրանում է (ZOOM էֆեկտ): Փայլաթիթեղի ողջ մակերեսով «AMD» և «5000» մանրատառաշարերն են, իսկ երկու եզրերի ողջ երկայնքով՝ «AMD» ապամետաղականացված գրառումները: Փայլաթիթեղի վրա՝ վերևի մասում, հորիզոնական տպագրված է «5000» թիվը: Փայլաթիթեղից ձախ ուղղահայաց, կարմիր գույնով թղթադրամի համարանիշն է՝ բաղկացած «ԲԲ» տառերից (թղթադրամի սերիա) և 8 թվից (թղթադրամի համար): Դիմանկարից ձախ՝ թղթադրամի ներքևի անկյունում, պատկերված է ձվաձև զարդանախշ, որտեղ գտնվում է «5000» թվի թաքնված պատկերը: Թղթադրամի վերին մասում, թղթադրամի երկայնքով մուգ մոխրագույնով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ներքև մանրատառաշարով՝ «ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 5000» կրկնվող բառերը և թվերը: Նշված բառերից ներքև երկնագույնով տպագրված է ութանկյուն զարդանախշ: Զարդանախշի մեջ պատկերված մասնիկները լուսընդդեմ դիտելիս մեծ ճշտությամբ լրացնում են դարձերեսի նույն ութանկյան մեջ առկա մասնիկները, և կարդացվում են «ՀՀ» տառերը: Դիմանկարից աջ կանաչ ֆոնի վրա պատկերված են Սանահինի եկեղեցու գրապահոցի կամարները, որոնց ներքևի մասում սև գույնով տպագրված են ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրությունները և «Բանկի նախագահ» և «Ֆինանսների նախարար» բառերը:

Թղթադրամի միջնամասի կանաչ ֆոնով շերտի ներքևի մասում երկու տողով գրված են «ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը, որոնց գույնը ձախից աջ փոխվում է մուգ մոխրագույնից շագանակագույնի, ապա՝ կարմրամանուշակագույնի:

Թղթադրամի սպիտակ դաշտի վերին մասում հորիզոնական, սև գույնով տպագրված է թղթադրամի համարանիշը: Դրանից աջ մուգ շագանակագույնով պատկերված է մեկ թեք գծիկ և երկու կետ: Սպիտակ շերտի ներքևի մասում տպագրված է բացված գրքի պատկեր: Դրանից ներքև կարմրամանուշակագույնով և մուգ մոխրագույնով պատկերված է «5000» թիվը: «5000» թվի վերջին զրոյից վերև տպագրված է թողարկման տարեթիվը՝ «2012»: Թղթադրամի աջ եզրի մոտ ուղղահայաց «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» բառերն են: Թղթադրամի աջ և ձախ եզրերին առկա են անկանոն դասավորված դեղին շրջանակներ:

Թղթադրամի ներքևի աջ և ձախ մասերում բաց մանուշակագույնով մի քանի շերտով մանրատառաշարով տպագրված են «5000» թիվը և «AMD» տառերը:

Դարձերես

Հիմնական մոտիվը ներկայացնում է Լոռվա բնությունը պատկերող՝ Մարտիրոս Սարյանի կտավից մի դրվագ: Թղթադրամի վերևի մասում մուգ կանաչով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից վերև մանրատառաշարով՝ «ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 5000» կրկնվող բառերը և թիվը: Թղթադրամի աջ մասում ուղղահայաց պատկերված է զարդանախշ, որի մեջ, վերին մասում, գրված է «5000» թիվը: Թղթադրամի անվանական արժեքը տառերով գրված է ներքևի կենտրոնական մասում, որից ձախ թղթադրամի անվանական արժեքը՝ «5000» թիվը, տպագրված է հորիզոնական ալիքաձև գծով բաժանված մուգ և բաց կանաչ գույներով, որի ներքևի մուգ կանաչ մասը դիտման անկյան փոփոխության դեպքում փոխում է գույնը կանաչից կարմրի և հակառակը (STEP®):

Թղթադրամի վերևի աջ անկյունում ուղղահայաց գրված է «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»:

Թղթադրամի մեջտեղում մարգարտափայլ ներկով տպագրված է հորիզոնական ժապավեն, որի վրա գրված են «5000» թիվը և դրամի խորհրդանշանը՝ «֏»: Մարգարտափայլ ժապավենը լույսի անկման անկյան փոփոխության դեպքում երևում է մանուշակագույնից ոսկեգույնի փոփոխվող նրբերանգներով:

Թղթադրամի ձախ մասում առկա են անկանոն դասավորված դեղին գույնի շրջանակներ: Թղթադրամի ներքևի աջ և ձախ մասերում դեղին գույնով մի քանի շերտերով մանրատառաշարով տպագրված են «5000» թիվը և «AMD» տառերը:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տասը հազար դրամ անվանական արժեքով 2012 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի

Թղթադրամը տպագրված է սպիտակ թղթի վրա: Թղթադրամի չափսերն են՝ 150 x 72 մմ: Թղթադրամին Ավետիք Իսահակյանի դիմանկարը պատկերող և անվանական արժեքն արտահայտող ջրանիշ է: Դիմերեսի և դարձերեսի հիմնական գույնը մանուշակագույնն է: Թղթադրամը պարունակում է երկու պաշտպանական ներգիծ, որոնցից մեկն ամբողջությամբ ներդրված է թղթի մեջ և երևում է միայն լուսընդդեմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, իսկ մյուսը թղթադրամի դարձերեսի վրա երևում է արծաթափայլ պատուհանների (կետագծերի), իսկ լուսընդդեմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, որի մեջ կարդացվում է «AMD 10000» մանրատառաշարը:

Դիմերես

Թղթադրամի ձախ մասում բաց մանուշակագույն ֆոնի վրա, որը պատկերում է հայ մեծ նկարիչ Մ. Սարյանի Արագած լեռան գծանկարից մի դրվագ, մուգ մանուշակագույնով պատկերված է հայ մեծ գրող Ավետիք Իսահակյանի դիմանկարը: Դիմանկարից ձախ սև գույնով ուղղահայաց գրված է «Ավետիք Իսահակյան 1875-1957», իսկ դրանից ձախ փակցված է ուղղահայաց կինեգրամայով ժապավենաձև փայլաթիթեղ: Փայլաթիթեղի երկայնքով, պարբերաբար կրկնվելով, երևում է Ավետիք Իսահակյանի կիսադեմը դեպի աջ ու դրամի խորհրդանշանը՝ «֏», և մի զարդանախշ ու «10000» գրառումը, որոնք դիտման անկյան չնչին փոփոխման ընթացքում նույն տեղում փոխարինում են միմյանց: Այս պատկերների միջև երևում է «10000» գրառումը, որը լույսի անկման անկյան փոփոխության դեպքում մեծանում և փոքրանում է (ZOOM էֆեկտ): Փայլաթիթեղի ողջ մակերեսով «AMD» և «10000» մանրատառաշարերն են, իսկ երկու եզրերի ողջ երկայնքով երևում են «AMD» ապամետաղականացված գրառումները: Փայլաթիթեղի վրա վերևի մասում հորիզոնական տպագրված է «10000» թիվը: Փայլաթիթեղից ձախ ուղղահայաց, կարմիր

գույնով տպված է թղթադրամի համարանիշը՝ բաղկացած «ԳԱ» տառերից (թղթադրամի սերիա) և 8 թվից (թղթադրամի համար): Դիմանկարից ձախ՝ թղթադրամի ներքևի անկյունում, պատկերված է ծվածև զարդանախշ, որտեղ գտնվում է «10000» թվի թաքնված պատկերը: Թղթադրամի վերին մասում թղթադրամի երկայնքով մուգ մանուշակագույնով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ներքև միկրոտառաշարով՝ «ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 10000» կրկնվող բառերը և թվերը: Նշված բառերից ներքև բաց կանաչ գույնով տպագրված է ութանկյուն զարդանախշ: Զարդանախշի մեջ պատկերված մասնիկները լուսընդդեմ դիտելիս մեծ ճշտությամբ լրացնում են դարձերեսի նույն ութանկյան մեջ առկա մասնիկները, և կարդացվում են «ՀՀ» տառերը: Թղթադրամի միջնամասի ներքևի մասում սև գույնով տպագրված են ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրությունները և «Բանկի նախագահ» և «Ֆինանսների նախարար» բառերը:

Ստորագրությունների ներքևի մասում երկու տողով գրված են «ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը, որոնց գույնը ձախից դեպի աջ փոխվում է մուգ մանուշակագույնից մուգ վարդագույնի:

Թղթադրամի սպիտակ դաշտի վերին մասում հորիզոնական, սև գույնով տպագրված է թղթադրամի համարանիշը: Դրանից աջ մուգ վարդագույնով պատկերված են երկու թեք գծիկներ և մեկ կետ: Սպիտակ շերտի ներքևի մասում տպագրված է փետուրե գրչի և թանաքամանի տեսքով պատկեր: Դրանից ներքև մուգ մանուշակագույնով և մուգ վարդագույնով պատկերված է «10000» թիվը: «10000» թվի վերջին զրոյից վերև տպագրված է թողարկման տարեթիվը՝ «2012»: Թղթադրամի աջ եզրի մոտ ուղղահայաց տպագրված են «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» բառերը: Թղթադրամի աջ և ձախ եզրերին առկա են անկանոն դասավորված դեղին գույնի շրջանակներ:

Թղթադրամի ներքևի աջ և ձախ մասերում բաց մանուշակագույնով մի քանի շերտով մանրատառաշարով «10000» թիվը և «AMD» տառերն են:

<u>Դարձերես</u>

Հիմնական մոտիվը ներկայացնում է հին Գյումրիից մի պատկեր: Թղթադրամի վերևի մասում մուգ մանուշակագույնով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից վերև մանրատառաշարով՝ «ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 10000» կրկնվող բառերը և թիվը: Թղթադրամի աջ մասում ուղղահայաց պատկերված է զարդանախշ, որի մեջ, վերին մասում, գրված է «10000» թիվը: Թղթադրամի անվանական արժեքը տառերով գրված է ներքևի կենտրոնական մասում, որից ձախ թղթադրամի անվանական արժեքը՝ «10000» թիվը, տպագրված է հորիզոնական գծով բաժանված մուգ և բաց մանուշակագույնով, որի ներքևի մուգ մանուշակագույն մասը դիտման անկյան փոփոխության դեպքում փոխում է գույնը մուգ մանուշակագույնից կարմրի և հակառակը (STEP®):

Թղթադրամի վերևի աջ անկյունում ուղղահայաց գրված է «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»:

Թղթադրամի մեջտեղում մարգարտափայլ ներկով տպագրված է հորիզոնական ժապավեն, որի վրա գրված են «10000» թիվը և դրամի խորհրդանշանը՝ «֏»: Մարգարտափայլ ժապավենը լույսի անկման անկյան փոփոխության դեպքում երևում է մանուշակագույնից ոսկեգույնի փոփոխվող նրբերանգներով:

Թղթադրամի մեջտեղում առկա են անկանոն դասավորված դեղին գույնի շրջանակներ: Թղթադրամի ներքևի աջ և ձախ մասերում բաց մանուշակագույնով մի քանի շերտերով մանրատառաշարով տպագրված են «10000» թիվը և «AMD» տառերը:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քսան հազար դրամ անվանական արժեքով 2012 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի

Թղթադրամը տպագրված է սպիտակ գույնի թղթի վրա: Թղթադրամի չափսերն են՝ 155 x 72 մմ: Թղթադրամին Մարտիրոս Սարյանի դիմանկարը պատկերող և անվանական արժեքն արտահայտող ջրանիշ է: Դիմերեսի և դարձերեսի հիմնական գույներն են դեղինը և շագանակագույնը: Թղթադրամը պարունակում է երկու պաշտպանական ներգիծ, որոնցից մեկն ամբողջությամբ ներդրված է թղթի մեջ և երևում է միայն լուսընդդեմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, իսկ մյուսը թղթադրամի դարձերեսի վրա երևում է արծաթափայլ պատուհանների (կետագծերի), իսկ լուսընդդեմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, որի մեջ կարդացվում է «AMD 20000» կրկնվող մանրատառաշարը:

Դիմերես

Թղթադրամի ձախ մասում դեղին, նարնջագույն և մանուշակագույն ֆոնի վրա (Մ. Սարյանի նկարներից մեկից մի դրվագ), շագանակագույնով պատկերված է հայ մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանի դիմանկարը: Դիմանկարից ձախ սև գույնով ուղղահայաց գրված է «Մարտիրոս Սարյան 1880-1972», իսկ դրանից ձախ փակցված է ուղղահայաց կինեգրամայով ժապավենաձև փայլաթիթեղ: Փայլաթիթեղի երկայնքով, պարբերաբար կրկնվելով, երևում են Մարտիրոս Սարյանի կիսադեմն աջից ու դրամի խորհրդանշանը՝ «֏», և մի զարդանախշ ու «20000» գրառումը, որոնք դիտման անկյան չնչին փոփոխման ընթացքում նույն տեղում փոխարինում են միմյանց: Այս պատկերների միջև երևում է «20000» գրառումը, որը լույսի անկման անկյան փոփոխության դեպքում մեծանում և փոքրանում է (ZOOM էֆեկտ): Փայլաթիթեղի ողջ մակերեսով «AMD» և «20000» մանրատառաշարերն են, իսկ երկու եզրերի ողջ երկայնքով երևում են «AMD» ապամետաղականացված գրառումները: Փայլաթիթեղի վրա, վերևի մասում, հորիզոնական տպագրված է «20000» թիվը: Փայլաթիթեղից ձախ ուղղահայաց, կարմիր գույնով տպված է թղթադրամի համարանիշը՝ բաղկացած «ԴԲ» տառերից (թղթադրամի սերիա) և 8 թվից (թղթադրամի համար): Դիմանկարից ձախ, թղթադրամի ներքևի անկյունում, պատկերված է ձվաձև զարդանախշ, որտեղ գտնվում է «20000» թվի թաքնված պատկերը: Թղթադրամի վերին մասում թղթադրամի երկայնքով մուգ շագանակագույնով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ներքև միկրոտառաշարով՝ «ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 20000» կրկնվող բառերը և թվերը: Նշված բառերից ներքև նարնջագույնով և մանուշակագույնով տպագրված է թափանցիկ պատկերը ութանկյուն զարդանախշի տեսքով: Զարդանախշի մեջ պատկերված մասնիկները լուսընդդեմ դիտելիս մեծ ճշտությամբ լրացնում են դարձերեսին պատկերված ութանկյան մեջ առկա մասնիկները, և կարդացվում են «ՀՀ» տառերը:

Թղթադրամի միջնամասի ներքևի մասում սև գույնով տպագրված են ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրությունները և «Բանկի նախագահ» և «Ֆինանսների նախարար» բառերը:

Ստորագրությունների ներքևի մասում երկու տողով գրված են «ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը, որոնց գույնը ձախից աջ փոխվում է մուգ շագանակագույնից մուգ նարնջագույնի:

Թղթադրամի սպիտակ դաշտի վերին մասում հորիզոնական, սև գույնով տպագրված է թղթադրամի համարանիշը: Դրանից աջ մուգ նարնջագույնով պատկերված են երկու թեք գծիկներ և երկու կետ. Սպիտակ շերտի ներքևի մասում տպագրված է վրձինների և ներկապնակի պատկեր, դրանից ներքև՝ «20000» թիվը: «20000» թվի վերջին զրոյից վերև տպագրված է թողարկման տարեթիվը՝ «2012»: Թղթադրամի աջ եզրի մոտ, ուղղահայաց դիրքով տպագրված են «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» բառերը: Թղթադրամի աջ և ձախ եզրերին առկա են անկանոն դասավորված դեղին գույնի շրջանակներ: Թղթադրամի ներքևի աջ և ձախ մասերում դարչնագույն ներկով, մի քանի շերտով, մանրատառաշարով տպագրված են «20000» թիվը և «AMD» տառերը.

Դարձերես

Հիմնական մոտիվը ներկայացնում է Մ. Սարյանի կտավից մի դրվագ: Թղթադրամի վերևի մասում մուգ շագանակագույնով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից վերև միկրոտառաշարով՝ «ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 20000» կրկնվող բառերը և թիվը: Թղթադրամի աջ մասում ուղղահայաց պատկերված է զարդանախշ, որի մեջ, վերին մասում, գրված է «20000» թիվը: Թղթադրամի անվանական արժեքը տառերով գրված է ներքևի կենտրոնական մասում, որից ձախ թղթադրամի անվանական արժեքը՝ «20000» թիվը, տպագրված է հորիզոնական գծով բաժանված մուգ շագանակագույնով և նարնջագույնով, որի ներքևի մուգ շագանակագույն մասը դիտման անկյան փոփոխության դեպքում փոխում է գույնը մուգ շագանակագույնից կանաչի և հակառակը (STEP®):

Թղթադրամի վերևի աջ անկյունում ուղղահայաց գրված է «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»:

Թղթադրամի մեջտեղում մարգարտափայլ ներկով տպագրված է հորիզոնական ժապավեն, որի վրա գրված են «20000» թիվը և դրամի խորհրդանշանը՝ «֏»: Մարգարտափայլ ժապավենը լույսի անկման անկյան փոփոխության դեպքում երևում է մանուշակագույնից ոսկեգույնի փոփոխվող նրբերանգներով:

Թղթադրամի ձախ մասում առկա են անկանոն դասավորված դեղին գույնի շրջանակներ: Թղթադրամի ներքևի աջ և ձախ մասերում նարնջագույնով մի քանի շերտերով մանրատառաշարով տպագրված են «20000» թիվը և «AMD» տառերը:

Հրապարակային եղանակով դրամական միջոցների ներգրավման մասին *

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացվում են բազմաթիվ գրություններ, որոնցում խնդրվում է պարզաբանել այն օրինական ուղիները, որոնցով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքի սուբյեկտները հնարավորություն ունեն հրապարակային եղանակով ներգրավել դրամական միջոցներ:

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին հասցեագրված գրություններով բարձրացված խնդիրները,

հաշվի առնելով հրապարակային եղանակով դրամական միջոցների ներգրավման գործընթացի կարգավորման նպատակը, այն է՝ սպառողների իրավունքների պաշտպանությունը և նրանց վերադարձվող միջոցների երաշխավորումը կամ ներդրումներ կատարելիս հնարավոր ռիսկերի վերաբերյալ առավելագույն իրազեկվածության ապահովումը,

ելնելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ամրագրված՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովման և արժեթղթերում ներդրողների և ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խնդիրներից, և

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «զ» կետերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը պարզաբանում է.

1. Վերոհիշյալ հարցը կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ և 39-րդ հոդվածներով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներով և «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներով: Մասնավորապես՝

1) «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝

«Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու և (կամ) ներդրումներ կատարելու միջոցով:

Առանց Կենտրոնական բանկի կողմից տրված բանկային գործունեության լիցենզիայի (այսուհետ՝ լիցենզիա) Հայաստանի Հանրապետության տարածքում բանկային գործունեություն իրականացնելն արգելվում է:»:

2) «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

«2. Վարկային կազմակերպության գործունեություն է համարվում որպես ձեռնարկատիրական գործունեություն փոխառություններ ներգրավելը և (կամ) նմանատիպ գործարքներ կնքելը և (կամ) վարկեր տրամադրելը կամ սույն օրենքով սահմանված այլ ներդրումներ կատարելը:

Վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ նմանատիպ գործարքների թվին են դասվում նաև ներդրումային (պարտատոմսեր) և վճարային արժեթղթերի հրապարակային թողարկումը (բացառությամբ ներդրումային ֆոնդերի կողմից թողարկված արժեթղթերի) կամ այնպիսի գործարքների կնքումը, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում վարկային կազմակերպության համար, սակայն կապված չեն վարկային կազմակերպության կողմից պարտատիրոջ ապրանքներ վաճառելու, ծառայություններ մատուցելու կամ աշխատանքներ կատարելու հետ:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մայիսի 15-ին (ՀՀՊՏ N 15 (428), 1.06.2012):

3. Բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների, ինչպես նաև ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդի կառավարիչների, Հայաստանի Հանրապետությունում այլ անձանց արգելվում է իրականացնել սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված որևէ գործունեություն:»:

3) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ և 39-րդ հոդվածների համաձայն՝ ապահովագրական գործունեությունը «անձի կողմից որպես ապահովագրող կողմ պարբերաբար իր անունից ապահովագրական գործարքների կնքմանը, ինչպես նաև դրանցով ստանձնած պարտավորությունների կատարմանն ու ձեռք բերած իրավունքների իրականացմանն ուղղված փաստացի գործողությունների ամբողջություն է», և «արգելվում է առանց Կենտրոնական բանկի կողմից տրամադրված լիցենզիայի ապահովագրական, վերաապահովագրական կամ ապահովագրական բրոքերային գործունեության իրականացումը»:

4) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Առանց սույն օրենքի պահանջներին բավարարող ազդագրի հրապարակման, արժեթղթերի հրապարակային առաջարկ անելը արգելվում է:

5) «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածը ներդրումային ֆոնդը սահմանում է որպես «իրավաբանական անձ կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ֆոնդի կառավարման պայմանագրերի կամ նմանատիպ այլ պայմանագրերի հիման վրա ձևավորված ակտիվների համախումբ, որն ստեղծվել և (կամ) գործում (օգտագործվում) է՝ որպես նպատակ կամ հիմնական նպատակներից մեկն ունենալով ներդրողներից հավաքագրված միջոցները միասնական ներդրումային քաղաքականության ներքո արժեթղթերում և (կամ) այլ ակտիվներում կոլեկտիվ ներդրումների միջոցով ապահովել այդ միջոցների վերադարձը ներդրողներին կապիտալի ավելացման, շահաբաժինների և (կամ) այլ ֆինանսական եկամտի տեսքով՝ վերջինների կողմից իրավաբանական անձի կապիտալում (ակտիվների համախմբում) կատարված ներդրումներին համապատասխան և կախված այդ ներդրումների կառավարման արդյունքներից»: Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Ֆոնդը (այդ թվում՝ ոչ հրապարակային ֆոնդը) կարող է ստեղծվել և իրականացնել սույն օրենքով նախատեսված գործունեությունը միայն սույն օրենքով նախատեսված կարգով ֆոնդը (դրա կանոնները) Կենտրոնական բանկի կողմից գրանցվելու պահից:»:

6) «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածը ակտիվներով ապահովված արժեթղթերը սահմանում է որպես «արժեթղթավորման հիմնադրամի կողմից սույն օրենքին համապատասխան թողարկված արժեթղթեր, որոնք ապահովված են ակտիվների խմբով, և որոնց դիմաց վճարումները գլխավորապես կախված են ակտիվների խմբի մեջ մտնող ակտիվների դիմաց ստացվելիք վճարներից»: Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Արժեթղթավորման հիմնադրամը սույն օրենքին համապատասխան ստեղծված և բացառապես արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման նպատակ հետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է:»:

2. Սույն պարզաբանման 1-ին կետում մեջբերված դրույթների համադրումը հանգեցնում է այն եզրահանգման, որ ***Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիզիկական և իրավաբանական անձինք հրապարակային եղանակով դրամական միջոցներ կարող են ներգրավել (հրապարակային եղանակով այնպիսի գործարքներ կնքել, որոնք դրամական պարտավորություններ են առաջացնում անձի համար, սակայն կապված չեն նրա կողմից ապրանքներ վաճառելու, ծառայություններ մատուցելու կամ աշխատանքներ կատարելու հետ) բացառապես հետևյալ օրինական ուղիներով***՝

1) ***ավանդների ներգրավում,*** որպիսի գործունեություն կարող են իրականացնել միայն օրենքի կամ համապատասխան լիցենզիայի հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում բանկային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձինք (այսուհետ՝ բանկեր).

2) ***հրապարակային եղանակով փոխառությունների և վարկերի ներգրավում,*** որպիսի գործունեություն կարող են իրականացնել միայն բանկերը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները՝ օրենքով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված պահանջներին համապատասխան, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարիչները և ներդրումային ֆոնդերը՝ տվյալ ներդրումային ֆոնդի ներդրումային քաղաքականության պահանջներին համապատասխան.

3) ***ապահովագրավճարների ներգրավում,*** որպիսի գործունեություն կարող են իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացված ապահովագրական գործունեության համապատասխան դասով լիցենզիա ունեցող անձինք.

4) ***արժեթղթերի հրապարակային առաջարկ***, որը կարող են իրականացնել միայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ տվյալ արժեթղթերի ազդագիրը Հայաս-

տանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցած և հրապարակած (իսկ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ և 6-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում՝ անկախ նման ազդագրի առկայության հանգամանքի) անձինք՝ անձամբ կամ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց միջոցով, իսկ ներդրումային ֆոնդի փայեր (բաժնետոմսեր) և ակտիվներով ապահովված արժեթղթեր կարող են տեղաբաշխել միայն համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցված կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նախնական թույլտվությունը ստացած ներդրումային ֆոնդերը (դրանց կառավարիչները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված ներդրումային ֆոնդի կառավարման լիցենզիայի հիման վրա) և արժեթղթավորման հիմնադրամները:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 մայիսի 2012 թ., N2

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետի մասին *

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետը նախատեսում է ներդրումային համաձայնությունը որպես արժեթղթի տեսակ՝ միևնույն ժամանակ չսահմանելով ներդրումային համաձայնության հասկացությունը, ինչը հնարավորություն է ստեղծում նշված հասկացության տարաբնույթ ընկալման:

Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ հարցեր են առաջացել՝ կապված նշված հասկացության միատեսակ ընկալման հետ՝ ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանումների կողմից ուսումնասիրվել է տվյալ ոլորտի միջազգային փորձը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ միջազգային պրակտիկայում «ներդրումային համաձայնություն» հասկացության մեկնաբանման համար հիմնականում կիրառվում է «Հոուեյ թեստ»-ը (Howey test):[1]

Արդյունքում՝ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանումները եկել են այն համոզման, որ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված «ներդրումային համաձայնություն» հասկացության մեկնաբանման համար ևս կիրառելի է վերոնշյալ քառափուլ «Հոուեյ թեստ»-ը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «զ» կետերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը պ ա ր զ ա բ ա ն ու մ է .

1. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով ներդրումային համաձայնություն է համարվում ի թիվս այլոց նաև այն համաձայնությունը (պայմանագիրը, գործարքը, համաձայնագիրը, սխեման, պայմանավորվածությունը)՝ անկախ դրա ձևից, որի դեպքում անձը ներդնում է իր միջոցները «ընդհանուր ձեռնարկում» (բիզնեսում)՝ ակնկալելով եկամուտ, որը պետք է ստացվի գլխավորապես այլ անձանց ջանքերի շնորհիվ: Այսինքն՝ նման ներդրումային համաձայնության դեպքում պետք է առկա լինեն հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ.

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մայիսի 15-ին (ՀՀՊՏ N15(425), 1.06.2012):

[1] *«Հոուեյ թեստ»-ը սահմանվել է 1946 թ. ԱՄՆ «Sec. v. Howey Co. 328 US 293» դատական գործով՝ համաձայն որի ԱՄՆ Գերագույն դատարանը «ներդրումային համաձայնություն» հասկացությունը բացահայտելու համար կիրառել է չորս փուլային թեստեր:*

1) **Միջոցների ներդրում:** Ներդրումը կարող է լինել դրամական կամ ոչ դրամական ձևով, որը կատարվում է եկամուտ ստանալու նպատակով: Այսինքն՝ դրանով անձը (ներդրողը) անմիջականորեն ձեռք չի բերում սպառման ապրանք կամ ծառայություն:

2) **«Ընդհանուր ձեռնարկ» (բիզնես):** Ներդրողներն ունեն ընդհանուր, փոխկապակցված շահ ընդհանուր սխեմայում (հորիզոնական և/կամ ուղղահայաց): Հորիզոնական ընդհանրությունը նշանակում է, որ տարբեր ներդրողների «հաջողությունները» փոխկապված են (այդ թվում՝ ներդրողի միջոցների միավորման, ընդհանուր եկամտի/վնասի բաշխման միջոցով): Օրինակ՝ X անձինք ներդնում են միջոցներ «Ընդհանուր ձեռնարկում», որտեղ նշված անձանց ներդրված միջոցները միավորվում են, իսկ X անձանցից յուրաքանչյուրի հաջողությունը կախված է «Ընդհանուր ձեռնարկի» հաջողությունից. այսինքն՝ եկամուտներն ու վնասները համամասնորեն բաշխվում են X անձանց միջև՝ ըստ ներդրված միջոցների:

Ուղղահայաց ընդհանրությունը նշանակում է, որ ներդրողի «հաջողությունը» կախված է կազմակերպչի կամ կառավարչի «հաջողությունից» (ընդհանուր շահ ներդրողի ու կազմակերպչի միջև): Օրինակ՝ X անձը (կամ անձինք) ներդնում է որոշակի միջոցներ «Ընդհանուր ձեռնարկում», որից X անձի (կամ յուրաքանչյուր անձի) եկամուտը կախված է կազմակերպչի կամ կառավարչի եկամտից: Ընդ որում, նշված կախվածությունը կարող է դրսևորվել անձի և կառավարչի միջև համաձայնությամբ՝ ստացված եկամուտը բաշխելու վերաբերյալ:

3) **Եկամուտ ստանալու ակնկալիք:** Անձի ակնկալվող եկամուտը պետք է ստացվի ընդհանուր «ձեռնարկի» (բիզնեսի) եկամուտներից և ոչ թե բացառապես նրա լրացուցիչ հատկացումներից (այսինքն՝ անձն ակնկալում է ստանալ ավելին, քան իր կողմից կատարված ներդրումն է), և այդ եկամուտ ստանալու ակնկալիքը պետք է լինի ներդրում կատարելու հիմնական շարժառիթը: Ակնկալվող եկամուտը կարող է լինել տարբեր ձևերով, այդ թվում՝ դրամական կամ տնտեսական (ֆինանսական) վիճակի փոփոխություն: Ընդ որում, խոստացվող եկամուտը կարող է լինել ֆիքսված կամ փոփոխական:

4) **Եկամուտը ստացվում է հիմնականում այլ անձանց ջանքերի շնորհիվ:** Եկամուտը պետք է ստացվի այլ անձանց (այդ թվում՝ կազմակերպչի, կառավարչի) ջանքերի շնորհիվ: Ներդրողը կարող է կատարել ջանքեր, որոնք կնպաստեն ընդհանուր «ձեռնարկի» (բիզնեսի) եկամուտների ստացմանը, սակայն եկամուտները պետք է կախված լինեն գլխավորապես այլ անձանց ջանքերից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 մայիսի 2012 թ., N3

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՅԻՍ 2012)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2012 թվականի հունիս 5-ի նիստի «2012 թվականի հունիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012 թվականի հունիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 23
Իրական հատվածի ցուցանիշներ 26
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների ինդեքսներ
Գնաճ
Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 29
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները
Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 5-րդ և 6-րդ հրատարակության մեթոդաբանությունների)
ՀՀ վճարային հաշվեկշիռ (վերլուծական ներկայացում)
ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 5-րդ և 6-րդ հրատարակության մեթոդաբանությունների)
ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջազգային ներդրումային դիրք
ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվների և պարտավորությունների արժութային կազմը
ՀՀ համախառն արտաքին պարտք (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 5-րդ և 6-րդ հրատարակության մեթոդաբանությունների)
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 54
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 55
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 66
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 86
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 97
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 99
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
